

# ՐԱՖՖԻ-ՇԻԼԼԵՐ ԳՐԱԿԱՆ ԱՌԱՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ա. Ս. ԲԱԳՈՅԱՆ  
ԳՊՀ դասախոս

18-րդ դարում գերմանական լուսավորական գրականության մեջ ասպարեզ եկավ գրական հումքու մի շարժում՝ «Sturm und Drang» («Գրոհ և փորբորիկ») անունով, որի ակնառու ներկայացուցիչն էր երիտասարդ բանաստեղծ և դրամատուրգ Ֆ. Շիլլերը: Ստեղծագործական կյանքի առաջին շրջանում նա հանդես է գալիս իբրև բռնության, անարդարության և հասարակության ախտերի դեմ պայքարի առաջանարդիկ և իր գրական երախայրիքին՝ «Ավազակներ» («Die Räuber», 1781) դրամային իբրև բնարան ընտրում է «In tyranos!» («Ընդդեմ բռնակալների») արտահայտությունը: Ֆեոդալական ճամանակածության և հասարակական կյանքի համընդիմանուր հետամնացության պայմաններում ըմբռուտ երիտասարդ գրականություն է բերում չարիքի դեմ պայքարի ելած ինքնատիպ մի հերոսի՝ Կարլ Մոռորին, որը բռնությունու ու անարդարությունը պատրաստվում է խորտակել բռնությամբ՝ ավազակային պայքարի եղանակով:

Շիլլերի այս դրաման ներկայացնում է ինչպես հոգեբանական, այնպես էլ հասարակական սուր կոնֆլիկտներ, որոնք դուրս գալով ներ անձնական, ընտանեկան և ազգային շրջանակներից՝ համամարդկային արժեք են ստանում: Դեղինակն այստեղ արծարծում է ազատաշունչ այնպիսի գաղափարներ, որոնք շուրջ քառորդ դար անց՝ 19-րդ դարի 30-ական թվականներին, ներթափանցելով հայ իրականություն՝ դարավերջին արդեն մեծ արձագանք են գտնում ոչ միայն գրականության մեջ, այլև մշակութային կյանքում և հասարակության մեջ ընդհանրապես: Դասարակության արատը ոչնչացնելու շիլլերյան կոչերը հայ մտավորականության շրջանում մեծ ընդունելություն են գտնում և ոգեշնչում նրանց: Բազմաթիվ են փաստերը, որոնք վկայում են Շիլլերի նկատմամբ հայ մտավորականության ուշադրության, համակրանքի ու ակնածանքի մասին: Այսպես, Շիլլերից թարգմանություններ են կատարել Խ. Աբրովյանը, Ստ. Նազարյանը, Ղ. Ալիշանը, Ղ. Աղայանը և այլք, նրա երկերը հիացմունքով են կարդացել Ս. Նալբանդյանը, Րաֆֆին, Ալ. Շիրվանզադեն և շատ ուրիշներ, որոնք դրվատել ու մեծարել են գերմանացի լուսավորչին: Բավական է հիշել Ս. Նալբանդյանի «Նամակ հրատարակողին» վերտառությամբ երկու հոդվածները՝ Մարտիրոս Սառաֆյանց ստորագրությամբ՝ թվագրված «Պրոլուխա, Բեռլին, 9 նոյեմբերի 1859թ.»<sup>1</sup>, և Աղոլֆ Բլումենթալ ստորագրությամբ՝ թվագրված «Ավստրիա, Վիեննա, 9 նոյեմբերի 1859թ.»<sup>2</sup>, որոնցից առաջինում նա մեծ ոգևորությամբ նկարագրում է Շիլլերի հարյուրամյա հոբելյանին նվիրված տոնախմբությունը Գերմանիայում և մեծ դրամատուրգի արձանի բացումը Բեռլինի թատրոնի առջև, երկրորդում՝ նույն տոնախմբությունն ու գրողի արձանի բացումը արդեն Վիեննայում: (Դարձ է նշել, որ իրականում Նալբանդյանը մասնակցել է Շիլլերի ծննդյան հարյուրամյակի

<sup>1</sup> «Նյուսիսավայլ», 1859, N11, էջ 902-903:Տես Մ. Նալբանդյան, Ելք 6 հատորով, հա. 2, Երևան, 1980, էջ 378:

<sup>2</sup> «Նյուսիսավայլ», 1859, N11, էջ 903-906:Տես Մ. Նալբանդյան, Ելք 6 հատորով, հա. 2, Երևան, 1980, էջ 379-382:

նախատոնական հանդիսություններին, որոնց նկարագրությամբ նամակները նա արտասահմանից ուղարկել էր դեռևս ամռանը՝ հուլիս ամսին)<sup>3</sup>:

Նալբանդյանի համակրանքը Շիլերի նկատմամբ դրսերվում է նաև հանրահայտ «Երկու տող» պամֆլետում (1861թ.), որտեղ, ի թիվս այլ գրողների և փիլիսոփաների, նա հիշատակում է նաև Շիլերին՝ իբրև «Ճնշված մարդկության անմահ բարեկամի»<sup>4</sup>:

Առկա են նաև փաստեր, որոնք վկայում են, որ Նալբանդյանն ընթերցել է «Ավազակները» (Ենթադրվում է՝ ռուսերեն) և առանձին մտքեր ու պատկերավոր արտահայտություններ դուրս գրել այնտեղից՝ հետագայում օգտագործելով դրանք<sup>5</sup>:

Սույն հոդվածում նպատակ ունենք Նալբանդյան-Շիլեր փոխհարաբերությունը դիտարկել Ռաֆֆի-Շիլեր փոխհարաբերության համատեքստում, քանի որ Նալբանդյանն ուղղակի առնչություն ունի քննվող թեմայի հետ, մասնավորապես նա իբրև գրական կերպար՝ Դամր անվամբ, հանդես է գալիս «Խաչագողի հիշատակարանը» վեպում<sup>6</sup>:

\* \* \*

Ռաֆֆու ուշադրությունը Շիլերի նկատմամբ դրսերվել է դեռևս 50-ական թթ. սկզբին, երբ նա ուսանում էր Թիֆլիսի գիմնազիայում: Նրա թարգմանական երախայրիքը Շիլերի «Der Gang nach dem Eisenhammer» (1797) բալլարի փոխադրությունն էր ռուսերենից՝ «Ֆրիդոլին»<sup>7</sup> վերնագրով, որը շարադրված էր գրաբար լեզվով, արծակ ձևով և հրատարակվել է հետմահու<sup>8</sup>:

Ծանոթանալով հաճարեն գերմանացու ազատաշունչ երկերին՝ Ռաֆֆին հափշտակվել է նրա զաղափարներով, որոնք 19-րդ դարում նույնքան արդիական ու անհրաժեշտ էին հայ իրականության մեջ, որքան՝ դրանից մեկ դար առաջ Գերմանիայում: Ռաֆֆու կյանքում Շիլերի նշանակության մասին են վկայում թե՝ նրա ժամանակակիցները, թե՝ կենսագիրներն ու հետագա ուսումնասիրողները<sup>9</sup>: Նա ինքը «Փունջի» առաջարանում, ի թիվս այլ մեծությունների, նշում է նաև Շիլերին՝ իբրև գրողի չափանիշ և կատարելատիպ<sup>10</sup>, այնուհետև «Ու՞՞ է իմ հայրենիքը» բանաստեղծությանն իբրև բնաբան բերում է Շիլերի խոսքերը հայրե-

<sup>3</sup> **Ա. Նալբանդյան**, ԵԼԺ 6 հատորով, հտ. 3, Երևան, 1980, էջ 438:

<sup>4</sup> Սույն տեղում, էջ 17:

<sup>5</sup> **Ա. Բաբայան**, Շիլերը հայ գրականության մեջ և թատրոնում, Երևան, 1959, էջ 71:

<sup>6</sup> **Ռաֆֆի**, Եժ 10 հատորով, հտ. 2, Խ. Սամվելյանի ծանոթագրությունը, Երևան, 1955, էջ 650:

<sup>7</sup> **Ռաֆֆի**, Վեպիկներ և պատկերներ, հտ. 2, Թիֆլիս, 1893, էջ 373: Դրանից առաջ՝ 1891թ. «Աղբյուր» ամսագրի խմբագրությունը առանձին գրքով լույս է ընծայել այս երկը՝ որպես ընծանագրի՝ 1892թ. բաժանորդներին:

<sup>8</sup> Տես՝ **Ռաֆֆի**, Եժ 10 հատորով, հտ. 8, Խ. Սամվելյանի ծանոթագրությունը, Երևան, 1957, էջ 705: Տես՝ նաև **Ա. Բաբայան**, Շիլերը հայ գրականության մեջ և թատրոնում, Երևան, 1959, էջ 208:

<sup>9</sup> **Ե. Նեկրասովա**, ժողովածու: (Յօգուտ ռուս սովորաների): Մոսկվա, 1892, էջ 243-244: Տես՝ նաև **Ա. Բաբայան**, Շիլերը հայ գրականության մեջ և թատրոնում, Երևան, 1959, էջ 78:

<sup>10</sup> **Ռաֆֆի**, Փունջ, հտ. 1, Թիֆլիս, 1874, էջ IX:

նիքի մասին՝ վերցված «Վիլհելմ Տելլ» դրամայից<sup>11</sup>: Ռաֆֆին տարբեր առիթներով վկայակոչում է Շիլերին, մեջբերումներ կատարում նրանից կամ նրա մասին հնչած կարծիքներից, մասնավորապես անդրադառնում է Շիլերի Դոն Կառլոսի և պատմական Դոն Կառլոսի տարբերություններին<sup>12</sup>:

Գերմանացի մեծ դրամատուրգի ծննդյան 200-ամյակի առթիվ Ա. Բարյանը լույս է ընծայում «Շիլերը հայ գրականության մեջ և քատրոնում» (1959) ուսումնասիրությունը, որտեղ անդրադառնալով հայ գրական ու հասարակական կյանքում Շիլերի ստեղծագործությունների և գաղափարների դերին ու նշանակությանը՝ հայտնում է այն տեսակետը, որ «Շիլերի ազատասիրական գաղափարները որոշակի դեր են կատարել նաև Ռաֆֆու ստեղծագործական կյանքում»<sup>13</sup>: մասնավորապես նշելով «Զալալեդինը»: Ռաֆֆի-Շիլեր գրական առնչություններին մենք արդեն անդրադարձել ենք «Շիլերի «Ավագակները» և Ռաֆֆու «Զալալեդինը»» հոդվածում<sup>14</sup>: Եթե այստեղ ակնհայտ են Շիլերի գաղափարների անմիջական ազդեցությունը, սյուժետային և կերպարային ընհանրությունները, ապա «Խաչագողի հիշատակարանը» վեպի առումով գոյություն ունեն վիճելի խնդիրներ, որոնք կարիք ունեն լուսաբանման:

Գրականագիտության մեջ հայտնի չէ այս վեպի գրության ստույգ թվականը: Խաչագողների թեման Ռաֆֆուն հետաքրքրել է ստեղծագործական կյանքի վաղ շրջանից սկսած: 1856-68թթ., երբ նա Սալմաստում էր, պարերաբար այցելում է Սավրա, հետաքրքրվում խաչագողների կյանքի մանրանամաներով, ուսումնասիրում է նրանց մասին առկա տեղեկությունները և 1867 թվականից հետո «ամբողջացնում է ունեցած տեղեկությունները»<sup>15</sup>.

«Խաչագողի հիշատակարանը» վեպի ստեղծման համար իբրև շարժառիթ է ծառայել Է. Սյուի «Թափառական հրեան» վեպը: «Դեռ երիտասարդ հասակուն նա այնքան էր ոգևորվել էժեն Սյուի «Թափառական հրեա»-ով, որ կամեցել էր նույն ուղղությամբ վեպեր գրել,- Ռաֆֆու մասին հուշերում գրում է Ալ. Շիրվանցիներ:- Նա ինքը խոստովանում էր (Ընդգծումը մերն է՝ Ա. Բ.), որ «Խաչագողի հիշատակարանը» սկզբան է հենց այդ վեպի ազդեցությամբ, բայց հետո ենթարկված է փոփոխությունների»<sup>16</sup>: Ընդ որում՝ Սյուի «Թափառական հրեան» հայերեն է թարգմանել Մ. Նալբանդյանը 1857թ., հանգամանք, որը չի կարելի անտեսել այս վեպը քննելիս:

Առաջին հայացքից թվում է՝ անտր է բացառել Ռաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» վեպի և Շիլերի «Ավագակներ» դրամայի որևէ առնչություն, քանի որ

<sup>11</sup> **Ֆ. Շիլեր**, Վիլհելմ Տելլ, Թիֆլիս, 1873, էջ 52:

<sup>12</sup> **Ռաֆֆի**, Եժ 10 հատորով, հու. 10, «Պ. Դայկոնու կրիտիկան և «Կայծերը»», Երևան, 1959, էջ 90: Տես նաև **В. Г. Беллинский**, Собрание сочинений, в 3-х томах, т. 1, Москва, 1948, стр. 233.

<sup>13</sup> **Ա. Բարյայան**, Շիլերը հայ գրականության մեջ և քատրոնում, Երևան, 1959, էջ 80:

<sup>14</sup> Տես ՀՀ ԿԳՆ ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու 4, Գավառ, 2000, էջ 124-128:

<sup>15</sup> **Ռաֆֆի**, Եժ 10 հատորով, հու. 2, Խ. Սամվելյանի ծանոթագրությունը, Երևան, 1955, էջ 651:

<sup>16</sup> **Ալ. Շիրվանզադե**, Կյանքի բովից: Դուշեր, Ռաֆֆիի կյանքից, Երևան, 1982, էջ 467: Տես նաև Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Երևան, 1986, էջ 56:

հեղինակն ինքն է հիշատակում է. Սյուից ներշնչվելու հանգամանքը և վեպում էլ, ի թիվս աստվածաշնչյան այլ պատմությունների, խոսում է նաև «թափառական հրեայի» մասին: Սակայն մեզ օգնության է հասնում Ռաֆֆու «Մեղու» լրագրի խմբագիր Սիմոնյանցի ֆելիետոնի, մեծ վիպասանը գրում է. «Ես հավատացած եմ, եթե անմասի Շիլերը և «Մշակի» մեջ տպեր իր «Ավագակներ» անունով գեղեցիկ դրաման (Ընդգծումները մերն են՝ Ա.Բ.), Պ. Սիմոնյանցը հեղինակին կկոչեր ավագակ (Ընդգծումը հեղինակին է), որովհետև նկարել էր մի այնպիսի սարսափելի տիպ, ինչպիսին է Ֆրանց Մորը»<sup>17</sup>: Այնուհետև նա ենթադրում է, որ Է.Սյուից «Թափառական հրեա» վեպի առնչությանը ևս հոդվածագիրը նույնպիսի մոտեցում կարող է ունենալ: «Պ. Սիմոնյանցի լոգիկայով,-շարունակում է Ռաֆֆին,- ես էլ «խաչագող» եմ, որովհետև խաչագողների հայրենիքիցն եմ, որովհետև խաչագողների կյանքից մի վեպ եմ գրել»<sup>18</sup>: Հոդվածում Շիլերն ու Սյուն հիշատակվում են հաջորդաբար, և առաջինը հիշատակվում է «Ավագակների» հեղինակը:

Սակայն այստեղ առկա է ևս մի խնդիր. Շիլերի «Ավագակների» հայերեն անդրանիկ թարգմանությունը առաջին անգամ առանձին գրքով լույս է տեսել «Խաչագողի հիշատակարանից» շուրջ երկու տասնամյակ անց՝ 1890թ. Թիֆլիսում, Փ. Վարդանյանի թարգմանությամբ: Որտեղից կարող էր Ռաֆֆին դեռևս 60-70-ականներին ծանր լինել այս դրամային: Յարցի քննությունը մեզ հանգեցնում է հետևյալին. Աքրովյանից սկսած հայ իրականության մեջ օրեցօր մեծանում է հետաքրքրությունը Շիլերի ստեղծագործության նկատմամբ: Յայ պարբերական մամուլում տպագրվում են բազմաթիվ հատվածներ Շիլերի երկերից կամ ամբողջական գործեր, հայ բեմերում ներկայացվում են նրա պիեսներն ամբողջությամբ կամ կրօնատ տարբերակով: 1873թ. մայիսի 3-ին Թիֆլիսի Ամառային թատրոնում տեղի է ունենում «Ավագակների» առաջին ներկայացումը<sup>19</sup> (թարգմանիչ՝ Ն. Լալայան), Գ. Չմշկյանի դեկավարությամբ, որի հետ Ռաֆֆին ծանոթացել էր 1871 թվականին՝ «Մշակի» նախապատրաստական շրջանի խմբագրական ժողովներից մեկում<sup>20</sup>: Չմշկյանը դեռևս 60-ական թվականներից նպատակ ուներ բեմադրելու այս դրամայից որևէ տեսարան՝ անձամբ «փորձելու իր ուժերը»՝ մարմնավորելով Կարլին կամ Ֆրանցին<sup>21</sup>, և պիեսը թարգմանելու խնդրանքով դիմում է ժամանակի հայ թատրոնի նշանավոր գործիչ Միքայել Պատկանյանին: Սակայն նրանց այս ձեռնարկումը չի հաջողվում:

Վերը նշվածը ևս մեկ անգամ հաստատում է, որ Ռաֆֆին՝ իր ժամանակի լուսավորյալ և ազգի լուսավորության մեջ նրա փրկությունը տեսնող հանճարեղ հայրենասերը, դեռևս 60-ական թվականներին կարող էր ծանր լինել Շիլերի «Ավագակներում» ներկայացվող հարաբերություններին, գաղափարներին, բռ-

<sup>17</sup> «Մշակ», 1883, N25, էջ 1: Տես նաև Ռաֆֆի, Եժ 10 հատորով, հտ. 10, Երևան, 1959, էջ 62:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Ա. Բաբայան, Շիլերը հայ գրականության մեջ և թատրոնում, Երևան, 1959, էջ 245:

<sup>20</sup> Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Երևան, 1986, էջ 323:

<sup>21</sup> Գ. Չմշկյան, Իմ հիշատակարանը, Երևան, 1950, էջ 102-103:

նությունը խորտակելու կոչերին, թեև գոյություն չունի այս մասին որևէ ուղղակի հիշատակում: Փոխարենը՝ այս վեպում մենք տեսնում ենք ավազակների տարբեր կերպարներ, որոնց մեջ կան և այնպիսիները, ովքեր ականա են հայտնվել ոչ պատվարեր այդ ճանապարհին, և նրանց հոգին վերջնականապես աղարտված չեն անհաշիվ մեղքերի մղող ավազակային «բնազդներից»:

\* \* \*

«Խաչագողի հիշատակարանը» Ռաֆֆու առաջին ծավալուն ստեղծագործությունն է, որի գրությունը վիպասանն ըստ ամենայնի ավարտել է 1869-70 թվականներին<sup>22</sup>: Վեպն առաջին անգամ տպագրվել է 1882 և 1883 թվականներին «Մշակում», իսկ առանձին գրքով լույս է տեսել 1883թ. (I, II մասեր) և 1884թ. (III, IV մասեր)<sup>23</sup>: Վեպն սկսվում է «Ի՞նչ է խաչագողը» ընդարձակ առաջաբանով, որտեղ տրվում է խաչագողի համապարփակ բնութագիրը: Խաչագողների «հայրենիքը» Պարսկաստանի Սալմաստ գավառի Սավրա գյուղն է: Այստեղ է խաչագողի տունը, ընտանիքը, տնտեսությունը, և նա օրինակելի երկրագործ է: Սակայն հեռանալով տնից, նա «սկսում է աֆֆերամերի մեջ մտնել»՝ հանուն շահի, քանի որ «նա սարսափելի անհագ ձգուումն ունի մեծանալու, բարձրանալու և հարստանալու»<sup>24</sup>, և դա նրան հաջողվում է: «Խաչագող» անունը կապված է տաճարում արեղա ձևանալով՝ խաչերն ու արծաթեղենը գողանալու պատմության հետ: Սակայն խաչագողների գործունեությունն անհամենատ ընդարձակ ոլորտներ է ընդգրկում: Նրանք ընդունակ են աներևակայելի կերպարանափոխությունների, ցանկացած միջավայրի հարմարվելու և համապատասխան վարքագի դրսւորելով՝ լինի դա հասարակության վերնախավը թե ստորին դասը, լինի դա անկիրը ռամիկ թե գիտնական, արեղա թե խավարամիտ մոլլա... Նա կարող է լինել փողոցային սրիկա, կարող է լինել բարեպաշտ քրիստոնյա՝ ընդունակ «ողորմության ձեռք մեկնելու»: Նա «առաձգական է և դյուրաթեք» և «նայում է տիեզերքի վրա, որպես յուր հունձքի արտի»:

Խաչագողը «մի գարշելի տիպ է», «նեխած ջրի մրուրը»: Սակայն գրողը կարծես դատապարտում է ոչ թե խաչագող երևույթը, այլ դրա դրդապատճառները: Ռաֆֆին համոզված է, որ խաչագողը «ավերված, փչացած, անբարոյականացած հասարակության հրեշավոր ծնունդն է»<sup>25</sup>, և նույնքան համոզված է, որ «ամենակարող» այդ մարդիկ «հրաշքներ կգործեին, եթե ազնիվ լինեին...»<sup>26</sup>:

Վեպը շարադրված է իբրև հավաստի պատմություն՝ շարադրված երեմնի խաչագող Մուրադի օրագրի և նրա կնոջ՝ Նանայի պատմածների հիման վրա: Առաջին հայացքից անհնարին է թվում Ռաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» վեպի և Շիլլերի «Ավազակներ» դրամայի միջև ընդհանրությունների առկայությունը: Սակայն ուշադիր ընթերցողը չի կարող չնկատել դրանք թե՛ կերպարային

<sup>22</sup> **Ռաֆֆի**, Եժ 10 հատորով, հտ. 2, Խ. Սամվելյանի ծանոթագրությունը, Երևան, 1955, էջ 651:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 654:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 313:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 306:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 327:

համակարգում, թե՝ գաղափարական մակարդակում:

Առաջին ընդհանրությունը սոցիալական միջավայրն է, որտեղ գործում են համեմատվող երկերի հերոսները, և նրանք, որպես մարդկային որոշակի խավի ներկայացուցիչներ, դիտարկվում են իրու հասարակական տվյալ հարաբերությունների արդյունք: Երկու հեղինակների նպատակն էլ նույնն է՝ «ջախջախել արատը և վրեժ լուծել կոռնի, բարոյականության ու քաղաքացիական օրենքների համար», «դիմակազերծ անել արատն իր ողջ այլանդակ մերկությամբ»<sup>27</sup>: Եթե Շիլլերն իր դրամայի բնաբանում բերում է Հիպոկրատի հայտնի խոսքը՝ «Որտեղ անօգուտ են դեղորայքը, այնտեղ օգնում է երկարը, որտեղ անզոր է երկարը, այնտեղ օգնում է կրակը»<sup>28</sup>, ապա Ռաֆֆին հարց է բարձրացնում՝ «Մինչև Ե՞րբ պիտի ծածկենք մեր կեղտերը: Դա նույնը կլիներ,- շարունակում է վիպասանը,- ինչպես մի հիվանդ ամաչելով քաքցներ այն վերքերը, որոնք օրըստօրէ ավելի փտելով, նեխելով, վարակում են մարմնի ամբողջ կազմվածքը...»<sup>29</sup>: Ինչպես տեսնում ենք, երկու հեղինակներն էլ նախ կարևորում են ինքնագիտակցության դերը՝ իրականությունն ըստ արժանվույն գնահատելու հարցում, և դրությունը շտկելու համար առաջարկում են հասարակության ախտերի բժշկման «վիրաբուժական» եղանակը, քանի որ «դեղորայքն այլևս անզոր են»: Քննվող ստեղծագործություններում ընդհանրություն կարելի է համարել նաև այն, որ թե՛ Մուրադը և թե՛ Կարլ Մոորն իրենց կամքից ամենայն են հայտնվում ավագակային անպատճառ կյանքի բոհուբոհում, և երկուսն էլ, գիտակցելով իրենց արարոների վայրագությունը, մինչև վերջ չեն կորցնում իրենց մարդկային դեմքը, խիղճը, բարոյական որոշակի հատկանիշներ: Նրանք ընդունակ են սիրելու, կարեկցանքի և սրբությամբ են պահում տված երդումը, որքան էլ այն դաժան հետևանքներ ունենա:

Ընդհանրություն ենք տեսնում նաև կանանց կերպարներում: «Ավագակներուն» Անալիան, «Խաչագողի հիշատակարանը» վեպում՝ Սավրա զյուղի գրեթե բոլոր կանայք, այդ թվում՝ Մուրադի մայրը՝ Նազամին, սիրած աղջիկը՝ Սառան, որի հետ նշանված էր, հետագայում՝ Նենեն, օժտված են բարոյական բարձր հատկանիշներով: Նրանք ընդունակ են սիրելու, հավատարմությամբ սպասելու նույնիսկ այն դեպքում, երբ սիրեցյալի վերադարձի հույսն իսպառ մարել է: Ուշագրավ են հատկապես Անալիայի և Սառայի կերպարները, որոնք օժտված են մեծագույն մարդասիրությամբ: Նրանց համար դժվար է սիրելի մասին ցավալի լուրեր լսելը, սակայն առաջին հերթին մտածում են նրանց ծնողների (Անալիան՝ Կարլի հոր, Սառան՝ Մուրադի մոր) մասին, ովքեր անհանգիստ մտածություններից ու երկար սպասումից հյուծվել, սակայն չեն կորցրել սիրելի զավակին և մեկ անգամ տեսնելու, նրան գոնե վերջին անգամ գրկելու հույսը: Սառան և Անալիան հանդես են գալիս իրու պարկեշտության, առաքինության տիպար՝ պատրաստ անձնագործության հանուն սիրելի եակի: Այստեղ հետաքրքիր է Մուրադի և Կարլի վերաբերմունքը՝ գիտակցելով իրենց հանցանքների ամբողջ ծանրությու-

<sup>27</sup> **Ֆ. Շիլլեր**, Ընտիր երկեր, Երևան, 1952, էջ 33:

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> **Ռաֆֆի**, Եժ 10 հատորով, հտ. 2, Խ. Սամվելյանի ծանոթագործությունը, Երևան, 1955, էջ 315:

նը, ավազակության արատավոր ու կորստաբեր ճանապարհի գարշելիությունը՝ նրանք կարծես խուսափում են իրենց սիրելիներից՝ համարելով, որ արժանի չեն այդ բարի, իրեշտակային եակների սիրուն: Եթե Մուրադը անաչում է Սառայից՝ մտածելով, որ նա չի կարող գողի սիրել, և փախչում է նրանից, «որպես մի հանցավոր, որ արժանի չէր նրա սերին»<sup>30</sup>, ապա Կարլը Անալիային համարում է թշվար, քանի որ իր պես սիրկայի է սիրում: Ինչ վերաբերում է Մուրադ-Նենե հարաբերությանը, ապա այստեղ ևս առկա են ընդհանուր գծեր. Անալիան պատրաստ է Կարլի ձեռքից ընդունել մահը՝ գիտակցելով, որ նա երդմանք է կապված պազակների հետ և չի կարող իրենը լինել: Նենեն պատրաստ է հանցագործ դաշնալ, միայն թե իրեն էլ աքսորեն Սիրի, որտեղ գուցե կարողանա հանդիպել Մուրադին:

Դոգլոր դասի քննադատությունը ևս ընդհանուր գիծ է երկու հեղինակների համար, սակայն ցույց տալով խաչագողների կերպարանափոխությունները տարբեր կրոնների ներկայացուցիչների, Ռաֆֆին նշում է, որ նրանք չեն մարմնավորել հայ քահանայի: Եթե Շիլլերը կղերական Պատերին մեղադրում է հոգլոր դասի երեսպաշտության մեջ, ապա Ռաֆֆին դրվագներից մեկում թերևակի ակնարկում է. «...Քահանաները վախենում էին խոսել ավելի այն պատճառով, որ ցույց չտան իրանց տգիտությունը»<sup>31</sup>:

«Խաչագողի հիշատակարանը» վեպում ինքնատիպ է քավոր Պետրոսի բարդ ու հակասական կերպարը, որն առնչության եզրեր ունի թե ազնիվ ավազակ կարլ Մոռի, թե նրա տնարդի եղբոր՝ ստոր ու անազնիվ Ֆրանց Մոռի հետ: Առաջին հայացքից խաբերա և եղեռնագործ քավոր Պետրոսը զարմացնում է Մուրադին՝ դրսկորելով կարեկցանք ընչագուրկ ու թշվար մարդկանց նկատմամբ: Նա մտածում է աղքատներին օգնելու մասին և թալանում է միայն «Ժլատ հարուստներին»: Զեօք բերած գումարը նա տալիս է մի դեպքում՝ սպահանցի քահանային՝ եկեղեցու շինության համար, մյուս դեպքում՝ օտար երկրում սովատանց մի գյուղ թշվառությունից ազատելու համար: Յիշենք, որ Կարլը իր հասանելիքի երրորդ մասը բաժանում էր որբերին կամ հատկացնում «ընդունակ տղաների ուսման համար»: Բայց երբ խոսք է գնում խղճի ու խղճնտանքի մասին, նա կարծես կրկնում է Ֆրանցի խոսքերը. «Խի՛՛ն՛՛: Օ՛, այո՛, մի պատվական խրտվիլակ՝ ճնճղուկներին պարտեզից դուրս քշելու համար», - արհանարհանքով ասում է Ֆրանցն ու ավելացնում, որ այս «շատ գովելի գյուտ» է՝ «հիմարներին սանձելու և ռամիկներին ոտքի տակ պահելու համար»<sup>32</sup>: Քավոր Պետրոսն էլ բացականչում է. «Խղճնտանք... ազնվություն... ի՞նչ գեղեցիկ խոսքեր են, բայց նույնքան դատարկ, որքան ինքը՝ հիմարությունը...»: Այնուհետև նա փորձում է հիմնավորել իր խոսքերը. «Սարդ չէ կարող խղճնտանք և ազնվություն ունենալ այնպիսի ժանանակներում, եթե ամբողջ մթնոլորդ, որի մեջ ապրում է նա, վարակված է անբարոյականությամբ»<sup>33</sup>:

Եթե «Ավազակներում» իրրև հանցագործ հանդես են գալիս միայն ավազակ-

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 339:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 379:

<sup>32</sup> Ֆ. Շիլլեր, Ընտիր երկեր, Երևան, 1952, էջ 45-46:

<sup>33</sup> Ռաֆֆի, Եժ 10 հատորով, հտ. 2, Երևան, 1955, էջ 460:

Եերը, ապա «Խաչագողի հիշատակարանում» տեսնում ենք հանցագործների տարբեր տիպեր՝ խաչագողների, որոնց Շաֆֆին երթեմն ավազակ է անվանում, Զալլադ (դահիճ) մականունով ավազակապետին, ում բնորոշելիս գրում է, թե՝ «Ավազակը յուր գործունեությամբ շատ չէ զանազանվում խաչագողներից»<sup>34</sup>, և աքսորի մեջ գտնվող խորհրդավոր երիտասարդը, որին Համր էին կոչում: Ավազակապետին թեև դահիճ էին կոչում, բայց նա երբեք անմեղ արյուն չէր բափել: Կրկին հանգամանքներն էին նրան հասցրել այդ օրվան: Մինչդեռ նա «մեծահոգի ու բարի էր, որպես մի ազնիվ հերոս», «ուժեղ էր, որպես Ներկուլես» և «անկիրը ևս չէր. նրա բավական մշակված լեզուն և առողջ դատողությունները ցույց էին տալիս, թե ինքը գորագետ ուն էր»<sup>35</sup>: Պարզվում է՝ նա վեց տարի սովորել է Տաթկի վանքում: Նրա սիրո պատմությունն էլ ողբերգական վախճան է ունենում, և նա ակամա դառնում է հանցագործ՝ ի վերջո հայտնվելով աքսորում: Նրա մասին այս սուր տեղեկություններն էլ բավական են՝ Կարլ Սոորի հետ համեմատության եզրեր գտնելու համար:

Ինչպես նշվեց, ընդհանրություններն առկա են նաև քննվող ստեղծագործությունների գաղափարական մակարդակում: Այստեղ բարոյական նորմերից զատ ընդգծվում են նաև ազգային ինքնագիտակցության վերելքի, արատը մերկացնելու և ոչնչացնելու, բռնության դեմ համախմբվելու գաղափարները և այլն: Եթե «Խաչագողի հիշատակարանը» վեաի առաջին երեք մասերը մեծ մասամբ արկածային բնույթ են կրում, ապա չորրորդ մասն աչքի է ընկնում գաղափարների հարստությամբ: Այստեղ ներկայացվող Համրի կերպարը մարմնավորում է Ս. Նալբանդյանին (այս մասին խոսվեց հոդվածի սկզբում), որը դառնում է ոչ միայն Մուրադի դաստիարակը, այլև հեղինակի գաղափարախոսը: Նա խոսում է այնպիսի հասկացությունների մասին, ինչպիսիք են, օրինակ, անհատ, ընտանիք, ցեղ, ազգ, հայրենիք, պետություն, քաղաքակրթություն, լուսավորություն և այլն: Իր դատողություններն անելիս նա միշտ բերում է Մուրադի օրինակը՝ ցույց տալով, որ նա հանգամանքների բերումով է հայտնվել այդ ճանապարհին. «Չեզ հանցանքի մեջ ձգեցին այն հանգամանքները և այն կենսական պայմանները, որոնցով, սկսյալ մանկությունից, շրջապատված եք եղել»<sup>36</sup>: Այնուհետև ցույց տալով մյուս աքսորականներին՝ ասում է, որ նրանք «հասարակության հիվանդութ կազմվածքի արտադրած վերքերն ու պալարներն են, որ կտրել և այստեղ են ծգել, այն մտքով, որ կազմվածքը բոլորովին չվարակվի: ...Դրանց գործած հանցանքների արմատը դրած է եղել այն հողի մեջ, որից դրանք բուսել, ածել և զարգացել են»<sup>37</sup>:

Այսպիսով, եթե դիտարկում ենք գրողի բուն նպատակը՝ խաչագողերին համարելով հասարակության «հիվանդութ կազմվածքի» արգասիք և «պարսիկների բռնակալության բնական արդյունք», հանգում ենք Շիլերի այն մտքին, որ տեղ օրենքը հակադրվում է ազատությանը. «Պահանջում են, որ մարմինս կապերով պրկեմ և կամքս օրենքով կաշկանդեմ: Օրենքը խխունջի նման սողալ է ստի-

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 544:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 554:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 594:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 595:

պում այն մարդուն, որ կարող էր թռչել արծվի պես, - ասում է Կարլ Մոորը:- Օրենքը երբեք մեծ մարդ չստեղծեց, մինչդեռ ազատութունը հսկաներ է առաջ բերում և դյուցազուններ»<sup>38</sup>. Այսինքն՝ երկու հեղինակներն էլ անհատի ազատության շատագովներ են: Րաֆֆու մոտ այն ներկայացվում է ազգի ազատագրման համատեքսուում, Շիլլերի մոտ՝ սոցիալական ազատագրման: Սակայն անհնար է թռնության ու անարդարության դեմ միայնակ պայքար մրելը: «Կյանքը ձանձրալի է դառնում ավելի այն ժամանակ, երբ հասկանում ես նրա նպատակը և չես կարողանում ցանկացած կատարել», - ասում է Մոորադը<sup>39</sup>: Դամրի դատողություններն աշխատանքի ու կրթության, ազատության ու հավասարության մասին նրա մեջ արթնացնում են ազատության տեսչ, նա հասկանում է, որ անհավասար պայքարն է մղում անազնիվ միջոցների:

«Տուր մի գունդ ինձ նման կտրիճներ՝ Գերմանիան կդառնա մի հանրապետություն, որի առաջ կուսանաց վաճեր կրվան Հռոմ ու Սպարտա»<sup>40</sup>, - Վրոյվված գոչում է Կարլը՝ մտորելով ժամանակակիցների մեծամտության, երեսպաշտության և ճշճիմ բարերի մասին, որոնց պատճառներից մեկն էլ դարաշրջանի սոցիալական վիճակն էր:

\* \* \*

Քննելով Րաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» վեպի և Շիլլերի «Ավազակներ» դրամայի տիպարանական առանձնահատկությունները՝ գալիս ենք այն համոզնան, որ նշված ընդհանրությունները պատահական չեն: Ապացույց՝ Րաֆֆու գրական նախասիրությունները, նրա ժամանակակիցների կարծիքներն ու հուշերը:

Րաֆֆու ոչ մի գրվածք ինքնանպատակ չէ, և այսօր, երբ հայ ժողովուրդը կրկին կարիք ունի համախնբման, ավելի քան արդիական ու անհրաժեշտ են անհատի ազատության և ազգային ինքնագիտակցության վերելքի ոգեշնչող գաղափարները, արդարության, մարդասիրության, փոխօգնության և ազնիվ մղումների կոչերը, որոնք հասարակության են փոխանցվում նախ և առաջ գրականության միջոցով: Եվ ովքե՞՞՞ր, եթե ոչ Շիլլերն ու Րաֆֆին, ոչ միայն կարող են խոշոր պլանով պատկերել արատն իր ողջ նոոկալիությամբ, այլև ի գորու են դարերի հեռավորությունից տալ դրա հաղթահարման հնարավոր ուղիներն ու հասարակական բազում խնդիրների լուծման գործուն բանաձևերը:

## ЛИТЕРАТУРНЫЕ СХОДСТВА РАФФИ И ШИЛЛЕРА

A. C. БАГОЯН

В статье рассмотрены образы разбойников в произведениях "Разбойники" Ф. Шиллера и "Дневник Хачагоха" Раффи. Методами сопоставления и сравнения выявляются те особенности, которые аргументируют влияние идей Шиллера на некоторые произведения великого армянского беллетристы Раффи, в частности роман "Дневник Хачагоха". Анализируются общие черты развития сюжетов, характера и поведения персонажей, вопросы морали, относящиеся как к дворянству, так и к духове-

<sup>38</sup> Ֆ. Շիլլեր, Ընտիր Երկեր, Երևան, 1952, էջ 49:

<sup>39</sup> Րաֆֆի, Եժ 10 հատորով, հտ. 2, Երևան, 1955, էջ 613:

<sup>40</sup> Ֆ. Շիլլեր, Ընտիր Երկեր, Երևան, 1952, էջ 49:

нству. Подчеркиваются идеи справедливости и свободы, социального равенства, благородства и чести.

## ABOUT THE LITERARY RELATIONS BETWEEN RAFFI AND SHILLER

A. S. BAGOYAN

The article is devoted to the study of a robber's character in the novels "The Robbers" by F. Shiller and "The Memoir of a Cross Stealer" by Raffi. On the basis of synthesizing and comparison are such peculiarities which argue the influence of Shiller's ideas on several works of the Armenian great novelist, particularly on the novel "The Memoir of a Cross Stealer". The general traits of the acts, the development of extracts, the nature of characters and the issues of morality are analysed which deal with the nobility and the clergy. The ideas of justice, social equality and honour are underlined in the article.

## ԱՌԱՍՊԵԼԻ ԽՈՐՃՈՒՐԴԸ ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բ. Գ. ՂԱՐԻԲՅԱՆ  
գԴՀ շրջանավարտ

Մինչ «բզկտված հոգիների փիլիսոփայությամբ»<sup>1</sup> գրականագիտությանը ներկայանալը՝ ստեղծագործական առաջին շրջանում լույսընծայած պատմվածքներն արդեն իսկ ծշտում են Ավագյանի աշխարհգոցողությունն ու գեղագիտական ընթանումները։ Այս մասին գրեթե ոչինչ չի ասվում արձակագրին նվիրված հոդվածներում ու գրախոսականներում։ Դրանցում հիմնականում մատնանշվում է վերջինիս ստեղծագործության այս կամ այն առանձնահատկությունը («Դեղինակի խոսքը սեղմ է, զուսա, առաջին հայացքից փաստին արձագանքող, բայց կա կյանքի ընդհանրացված ընկալումը, թափանցող հայացքը, մեղմ, բայց վերջնական պատասխան տվող խոսքը»<sup>2</sup>, «Ասելիքը փոքր հիմքի վրա սպառող, անհամենատ սուր արտահայտչամիջոց պահանջող ստեղծագործություններ են դրանք»<sup>3</sup>, «Ավագյանի պատմվածքներին բնորոշ են ներքին կիրքն ու արտաքին անդրորությունը։ Դրանադիկ պատմությունը ոճի մեջ ստանում է հարթ ու «անփուլք» մակերես։ Գրողն այնպես թերև ու «անստուլգ» է պատմում, կարծես ուզում է ասել, այս ամենը դժվար է, դաժան, բայց սրանք չեն

<sup>1</sup> Այսպես է Ավագյանի «Դարավային տենդը» բնորոշում Ս. Արարեկյանը։ Տե՛ս **Արարեկյան Ս.**, Բզկտված հոգիների փիլիսոփայությունը, Գրական թերթ, 1971թ., N25, էջ 2:

<sup>2</sup> **Արգումանյան Լ.**, Արդար կյանքի ջատագովությամբ, Սովետական Դայաստան, 1966թ., ապրիլի 16, էջ 3: